Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1974 թ. հոկտեմբերի 8-ին, Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Զ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին, Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Գյուտ քին. Աղանյանցի կյանքը և գործունեությունը» թեմայով:

1997-98 թթ. աշխատել է Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությունում:

1998 թ. օգոստոս ամսին տեղափոխվել է Արարատյան Հայրապետական թեմ:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

1998 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ և օրհնությամբ գործուղվել է իր հոգևոր ծառայությունը կատարելու հայոց ազգային բանակում՝ իբրև գործունեության դաշտ ունենալով Իջևանում տեղակայված զինվորական զորամասը: